

Կապանի թիվ 2 ավագ դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումների դասընթացների

Առարկան՝ ՆԶՊ

Թեման՝ «Ձի նվորը մարտու մ»

Ուսուցիչը՝ Հարությունյան Հովհաննես

Դպրոցը՝ Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց

Խմբի պատասխանատու դասախոսը՝ Վ. Ստեփանյան

2022թ.

ԶԻՆՎՈՐԸ ՄԱՐՏՈՒՄ

Ներածություն

Ռազմական արվեստի, ռազմական գիտության մի կարևորագույն բաժին է հանդիսանում մարտավարությունը: Այն ընդգրկում է մարտը վարելու ձևերը, եղանակներն ու մեթոդները: Նաև ստորաբաժանումների և զորամասերի տեսականորեն և գործնականորեն մարտին նախապատրաստվելը և վարելը: Մարտավարության պատրաստությունը հանդիսանում է ստորաբաժանումների և զորամասերի անձնակազմերի դաշտային ուսուցման հիմքը: Դա պայմանավորված է նրանով, որ միայն պարապմունքների և վարժությունների ժամանակ է հնարավոր այդ ուսուցումը առավել մոտեցնել իրական դրությանը: Այս առումով տեղին է հիշել ռուս հանճարեղ զորավար Ա. Սուվորովի ասույթը. «**Ծանր է վարժանքում, թեթև՝ մարտում**»:

Մարտավարական պատրաստության ընթացքում ստուգվում և ճշգրտվում է նրա բուն էությունը, ստորաբաժանումների կազմը, մշակվում են մարտում նորագույն զենքերի և մարտական տեխնիկայի կիրառման եղանակները:

Ինչպես հայտնի է մարտը լինում է երկու տեսակի՝ հարձակում և պաշտպանություն: Երկու տրամագծորեն հակառակ իրավիճակներ, զինվորի կողմից իրականացվող տարբեր դերեր: Եթե պաշտպանության ժամանակ զինվորը գտնվում է խրամատում և սպասում է հակառակորդի հարձակմանը, ապա հարձակման ժամանակ զինվորը գործում է բաց տեղանքում, հակառակորդի կրակի տակ: Նա այդ պայմաններում պետք է տեղաշարժվի, ձգտի մոտենալ հակառակորդի պաշտպանության դիրքերին:

Այստեղ շատ կարևոր է զինվորի անհատական բարձր որակները՝ տոկոսություն, ճարպկություն, շրջահայացություն, նպատակալացություն: Այստեղ շատ կարևոր է զինվորի ոչ միայն ֆիզիկական այլ նաև նրա հոգեբանական պատրաստվածությունը:

ԶԻՆՎՈՐԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԶԻՆՎՈՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՈՒՆՆԵՐԸ ՀԱՐՁԱԿՎԵԼԻՄ

Հարձակումը մարտի հիմնական տեսակն է, որն անցկացվում է հակառակորդին ջախջախելու և տեղանքի կարևոր շրջանները (բնագծերը, օբյեկտները) գրավելու նպատակով: Այն կայուն է բոլոր առկա միջոցներով հակառակորդին խեցելու, վճռական գրոհի, նրա դիրքի խորքը գորքի սրընթաց առաջխաղացման, կենդանի ուժը ոչնչացնելու և գրավելու, զենքը, ռազմական տեխնիկան և տեղանքի նշված շրջանները (բնագծերը) գրավելու մեջ:

Գրոհը տանկային ու մոտոհրաձգային ստորաբաժանումների սրընթաց և առանց կանգառի շարժումն է մարտակարգով տանկերի, ՀՄՄ-ների (ԶՓ-ների) ուժգին կրակի զուգակցմամբ, իսկ հակառակորդին մոտենալուն զուգընթաց՝ նաև զենքի մյուս տեսակների կրակով՝ նրան ոչնչացնելու (ջախջախելու) նպատակով:

Հարձակման ժամանակ զինվորը օգտագործելով հակառակորդին կրակով խեցելու արդյունքները, գործում է ուժերի ողջ լարումով: Հարձակումից առաջ նա պետք է պարզաբանի իր խնդիրը, ինչպես նաև ջոկի և դասակի խնդիրները, խոցման նշանակետն ու կրակ բացելու կարգը. Իմանա այն տանկի համարը (տարբերանշանը), որի ետևից գործելու է ջոկը, նրա, ինչպես նաև մյուս կրակային միջոցների հետ փոխգործակցելու կարգը, ջոկի տեղը շղթայում, արգելափակոցների ու խոչընդոտների հաղթահարման կարգը, հրամանատարի հաստատած ազդանշանները, ստուգի զենքի սարքինությունը և այն նախապատրաստի մարտին, ստուգի զինամթերքի առկայությունը և անհրաժեշտության դեպքում լրացնի այն, ստուգի անհատական պաշտպանական միջոցների առկայությունն ու սարքինությունը, հարմարեցնի հանդերձանքը:

Գրոհի ժամանակ զինվորը ջոկի կազմում առանց հապաղելու շարջվում է տանկի հետևից և իր կրակով ոչնչացնում հակառակորդի կրակային միջոցները, առաջին հերթին՝ հակատանկայինները, ժամանակին տանկին ցույց է տալիս առաջխաղացման խանգարող առավել վտանգավոր նշանակետերը:

ՀԱՐՁԱԿՈՒՄ ԸՆԹԱՑՔԻՑ

Մինչև ընթացքից հարձակման սկիզբը՝ զինվորը ջոկի կազմում, ծածուկ տեղեփաշխվում է ջոկի հրամանատարի նշած տեղում, որտեղ նա առաջիկա մարտին է նախապատրաստում զենքն ու մարտական տեխնիկան և միշտ գտնվում է մարտական պատրաստականության մեջ՝ հակառակորդի օդային և ցամաքային հարձակումը ետ մղելու համար:

Կատարվող առաջադրանքով, տեղանքի բնույթով և իրադրության այլ պայմաններով պայմանավորված, զինվորը մոտոհրաձգային ջոկի կազմում կարող է գործել ՀՄՄ-ի (ՁՓ-ի) վրա, հետիոտն կարգով (ձմռանը՝ դահուկներով) կամ որպես դեսանտ՝ տանկի վրա:

ՀՄՄ-ով (ՁՓ-ով) հարձակման ժամանակ զինվորը նախօրոք նախապատրաստվում էնստեցմանը: Ընդորում նա հատուկ ուշադրություն է դարձնում անձնական հանդերձանքին, զենքի սարքինությանը, չափաքանակով սահմանված զինամթերքի առկայությանը: Բացի, այդ ստուգում է արդյոք լիցքավորված է զենքը, իսկ եթե զենքը լիցքավորելու հրաման է եղել, ապա այն դրված է պահպանակի վրա թե ոչ: Սվին դանակը պետք է հանել:


Զինվորի նստեցումը հետևակի մարտական մեքենա կարող է կատարվել ետևի դռներով, իսկ զրահափոխադրիչ՝ ելանցքերով:

Մարտական մեքենա նստելու համար զինվորները ձոկի կազմում շարվում են մեքենայի մոտ՝ դրա համար սահմանված տեղում, հրամանատարի «Մեքենայի մոտ» հրամանով (ազդանշանով):

«Տեղերում» հրամանով զինվորը, օգտագործելով մեքենայի անիվները, թրթուռները, և ոտնատեղերը, արագ գրավում է մարտական մեքենայում իր տեղը (Նկ 1):

Նստեցման ժամանակ զենքը պահում է, ինչպես հարմար է, բացառությամբ Կալաշնիկովի գնդացիների, որոնք փոխանցվում են արդեն տեղավորված կամ ետևում կանգնած զինձառայողներին:

1 □□□



□□□□□□□□□□ □ □□□ □□ □□ □□□□ □□□-□□□□ (□□□□ □□□□ □□ □□□□ , □□□ □□□ □ □□□□
□□□□ □□□□□□□□ □□□□-□ □□□ □□ □□□□ □ □□)

ՀՄՄ-ՈՎ (ՁՓ-ՈՎ) ԳՐՈՂ ԸՆԹԱՑՔԻՑ

Դասակի մարտական գծով ծավալվելուն պես մեխանիկ-վարորդը (վարորդը) ջոկի հրամանատարի ցուցումով ՀՄՄ-ն (ՁՓ-ն) դուրս է բերում իր ուղղության վրա և նշանառու օպերատորի (գնդացրի նշանառուի) հետ պարզաբանում է գրոհի օբյեկտը, հետագա հարձակման ուղղությունն ու անցնելու տեղը արգելափակոցներում:

ՀՄՄ-ով (ՁՓ-ով) գրոհը սկսելուն պես մեխանիկ վարորդը մեքենան տանում է տանկի հետևից՝ 100-200մ հեռավորության վրա:

Ականադաշտը հաղթահարում են՝ օգտագործելով տանկի վրա առկա ականագերծիչը, իսկ դրա բացակայության դեպքում՝ տանկերի և հարևան մարտական մեքենաների հետ սերտ փոխգործակցելով:

Արգելափակոցները հաղթահարելուց հետո մեխանիկ-վարորդը ճիշտ սահմանված ժամին մեքենան դուրս է բերում հակառակորդի պաշտպանության առաջավոր եզր և առանց կանգ առնելու շարունակում շարժվել դեպի պաշտպանության խորքը՝ պահպանելով հարձակման ուղղությունը:

Նշանառու օպերատորը, ջոկի հրամանատարի հրամանով, կամ ինքնուրույն, առաջխաղացման ու գրոհի ընթացքում, մեքենայի վրա տեղակայված զենքով ոչնչացնում է կրակային միջոցները, առաջին հերթին՝ հակատանկայինները: Ավտոմատավորներն ու գնդացրորդներն մեքենայի հրակնատներից կրակելով, հրաձգային զենքով ոչնչացնում են հակառակորդի կրակային միջոցներն ու կենդանի ուժը:

Ավտոմատավորն ու գնդացրորդն պետք է իմանան, որ հրակնատից կրակ վարելիս հրաձգության ուղղությունը պետք է լինի 45-60°:

ԳՐՈՂ ՀԵՏԻՈՏՆ ԿԱՐԳՈՎ

Հետին կարգով գրոհելիս ջոկի հրամանատարի «Ձոկ, պատրաստվիր հետևականացման» հրամանով մեխանիկ վարորդը (վարորդը) ավելացնում է մարտական մեքենայի շարժման արագությունն ու հասնում տանկին, զինվորը հրակնատից հանում է զենքը, այն դնում պահպանակի վրա և նախապատրաստվում հետևականացման :

Մարտական մեքենայից զինվորի իջնելը կատարվում է ՀՄՄ-ից հետևի դռնից, ԶՓ-ից՝ էլանցքերից:

Մարտական մեքենան հետևակացման բնագիծ դուրս բերելուն պես մեխանիկ-վարորդը ջոկի հրամանատարի «Դեպի մեքենան» հրամանով դանդաղեցնում է ընթացքը կամ օգտագործելով տեղանքի ծալքերն ու առկա թաքստոցները՝ կատարում կարճ կանգառ: Զինվորը ցատկում է մարտական մեքենայից և ջոկի հրամանատարի «Ձոկ, այսինչ առարկայի ուղղությամբ, ուղղորդող՝ այսինչ, մարտի- առաջ՝» կամ «Ձոկ իմ հետևից, մարտի՛» հրամանով իր տեղն է զբաղեցնում շղթայում, պահպանելով 6-8մ (8-12քայլ) տարածություն զինվորների միջև, ընթացքից կրակ են բացում, ջոկի կազմով վազքով կամ արագացված քայլով շարունակվում է շարժումը դեպի առաջավոր եզրը:

Գրոհն սկսելուց առաջ զինվորը պարզաբանում է գրոհի օբյեկտն ու արգելափակոցների հաղթահարման կարգը: Անընդհատ հետևելով տանկին նա իր կրակով ոչնչացնում է հակառակորդի կրակային միջոցները, առաջին հերթին՝ հակատանկայինները:

Գրոհն պետք է լինի սրընթաց, դա է հաջողության գրավականը: Դանդաղ շարժվող զինվորը հարմար թիրախ է հակառակորդի համար: Ականադաշտին մոտենալիս, ջոկի հրամանատարի «Ձոկ իմ հետևից, միաշարասյուն (երկարասյուն), ականադաշտի անցումը, վազքով- մարշ՝» հրամանով, գնդացրորդն առաջինն է շարժվում դեպի անցումը, կրակով պատասպարում ջոկի շարժումը, իսկ մնացած զինվորները վերադասավորվում են

շարասյունով և սրընթաց ներսովելով առաջ՝ տանկի ետևի, նրա թրթուրագծերով կամ բացված անցումով, ՀՄՄ-Ի(ԶՓ-ի) կրակի պատասպարմամբ, հաղթահարում են ականադաշտը:

Հաղթահարելով ականադաշտը՝ ջոկի հրամանատարի «Ջոկ, մարտի առաջ» հրամանով, զինվորը նորից զբաղեցնում է իր տեղը ջոկի շղթայում, ընթացքից կրակելով հակառակորդի վրա՝ սրընթաց շարժվում է դեպի գրոհի օբյեկտը:

Մոտենալով հակառակորդի խրամուղուն 30-35մ-ի չափով հրամանատարի «նոնակով-կրակ» հրամանով զինվորը նոնակը նետում է խրամուղու մեջ և սրընթաց թափով, կռացած, «Ուռա՛» գոչելով վճռականորեն նետվում է դեպի պաշտպանության առաջավոր եզրը, դիմահար կրակով ոչնչացնում հակառակորդին և առանց կանգ առնելու շարունակում գրոհը նշված ուղղությամբ: Եթե զինվորը ստիպված է մարտը վարել խրամուղում կամ հաղորդակցման ուղում, ապա նա տեղաշարժվում է, որքան հնարավոր է արագ: Մինչև խրամուղու կամ հաղորդակցման ուղու բեկվածքի մոտ դուրս գալը, զինվորը նոնակ է նետում և ավտոմատից կատարում 1-2 կրակահերթ :

Խրամուղներում կամ հաղորդակցման ուղիներում հակառակորդի դրած «ոգնիները», «երկեղջուրները» և այլ լարային արգելափակոցները վեր են նետում սվիններով կամ պայթեցնում նոնակով: Եթե դա անել հնարավոր չէ ապա պետք է այդպիսի տեղամասը ծածուկ շրջանցել վերևից:

Տեղաշարժվելով հակառակորդի խրամուղով՝ պետք է ուշադիր գննել՝ արդյոք այնտեղ չկան ական-անակնկալներ և ուրիշ պայթուցիկ սարքեր: Ականապայթուցիկ արգելափակոցներ հայտնաբերելիս պետք է դրանք վնասազերծել, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա պետք է տեղադրել լավ տեսանելի նախազգուշացնող նշաններ:

ՀՄՄ-ն դեսանտի իջեցնելուց հետո հակառակորդի ականադաշտը հաղթահարում է տանկերի հետ կրակային փոխգործակցությամբ և հրետանու կրակային պատասպարման ներքո:

Հաղթահարելով արգելափակոցները, ՀՄՄ-ն (ԶՓ-ն) օգտագործելով տեղանքի ծալքերը՝ մի բնագծից մյուսը, «ցատկերով» շարժվում է իր ջոկի հետևից, նրան կրակով պատասպարելն ապահովող ապահով հեռավորության վրա, իսկ երբեմն, անմիջապես ջոկի

շղթայում, ընդ որում մեխանիկ-վարորդը նշանառու-օպերատորի համար ստեղծում է հակառակորդի կրակային միջոցները խոցելու նպատակով պայմաններ:

Կրակը վարում են ջոկի շղթայի վրայով և ջոկերի միջտարածություններում: Բաց թևի վրա հարձակվելիս կրակը կարելի է վարել նաև ջոկի թևի ետևից: ՀՄՄ-ի (ԶՓ-ի) զենքի այս կամ այն տեսակի և կրակը վարելու եղանակի ընտրությունը պայմանավորված է կոնկրետ իրադրությամբ, հակառակորդի հայտնաբերված կրակային միջոցներով և տեղանքի պայմաններով:

ՀՄՄ-ի (ԶՓ-ի) տեղաշարժման ուղղության ընտրությունը կատարում են նշանառու օպերատորը (գնդացրի նշանառուն) և մեխանիկ վարորդը, ջոկի հրամանատարի նախօրոք առաջադրված խնդրին համապատասխան: Շարժման ուղղությունը պետք է ապահովի ՀՄՄ-ի (ԶՓ-ի)անցունակությունը և գործողությունների գաղտնիությունը, որին հասնում են նախօրոք որոշելով նոր կրակային դիրքի տեղը, նրա մոտենալուերթուղին, տեղաշարժվելով սրընթաց և նկատի առնելով տեղանքի (հեղեղատների, ցածրավայրերի, բարձունքների, լիցքերի, շինությունների) ռելիեֆը:Ջոկի շղթայից ետ չընկնելու, ջոկը կրակով պատսպարելու, ՀՄՄ-ի (ԶՓ-ի) մարտական հնարավորությունները չնվազեցնելու, ինչպես նաև հակառակորդին ՀՄՄ-ի (ԶՓ-ի) խոցման հնարավորություն չտալու համար նպատակահարմար է կրակ վարել մեկ դիրքից (կանգառից)1-3 բոպելից ոչ ավելի տևողությամբ: ՀՄՄ-ի (ԶՓ-ի) յուրաքանչյուր տեղեշարժ կատարվում է նկատի առնելով դասակի մյուս ՀՄՄ-ների (ԶՓ-ների)տեղեշարժը:



Խառը ականային դաշտի հաղթահանումը տանկի հենից

Հ
ակ
առ
ակ
որդ
ի
պա
շտ
պա
նու
թյա
ն
խո
րքո
ւմ
հա
րձ
ակ
վել
իս
զին
վոր
ը
հա
րձ
ակ
մա

ն ուղղությունից չշեղվելով և օգտագործելով տեղանքի ծալքերը, ջոկի կազմով արագ դուրս է գալիս հակառակորդի թևը, կամ թիկունքն ու վճռական գրոհով ոչնչացնում նրան:

Տանկի կամ թեկուզ մեկ զինվորի հաջող առաջխաղացմանը անմիջապես աջակցում են մյուս զիվորները և ամբողջ ջոկը:

Նոնականետորդն ու գնդացրորդն անմիջականորեն շարժվում են ջոկի հրամանատարի կողքին և ոչնչացնում հակառակորդին՝ հրամանատարի հրամանով կամ ինքնուրույն:

Գործելով գրոհող շղթայում՝ դիպուկահարը ուշադիր հետևում է մարտի դաշտին և առաջին հերթին խոցում առավել վտանգավոր նշանակետերը: Հակառակորդի դիմադրության թուլացման գուզընթաց՝ հետիոտն կարգով գործող զինվորը, ջոկի հրամանատարի հրամանով նստում է մեքենան:

Հրամանատարի «Դեպի մեքենաները» հրամանով զինվորը վազքով մոտենում է իրմեքենային, զենքը դնում պահպանակին, այնուհետև՝ «Տեղերում» հրամանով, սահմանված կարգով նստում մեքենան և նախապատրաստվում ընթացքից կրակ վարելուն:

Պաշտպանության խորքում գտնվող արգելափակոցներն ու խոչընդոտները հաղթահարում կամ շրջանցում են:

ՀԱՐՁԱԿՈՒՄ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆԱ

ՇՓՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հարձակումը հակառակորդի հետ ամիջական շփման դրությունից սկսվում է ելման դիրքից: Ելման դիրք է հանդիսանում խրամուղին (խրամատը), որը զինվորը զբաղեցնում է ծածուկ՝ հրամանատարի նշած ժամին: Հարձակման համար ելման դիրքում զինվորը գտնվում է հակառակորդի հնարավոր հարձակումը ես մղելուն մշտական պատրաստ վիճակում: Նա պետք է իմանա, թե որտեղով է անցնում հակառակորդի պաշտպանության առաջավոր եզրը, որտեղից կարող է սպասել նրա հանկարծակի գործողությունները, հետևել նրան և լրասարքավորել ելման դիրքը հարձակման համար:

Մինչև գրոհի անցնելը զինվորը ջոկի հրամանատարի հրամանով կրակում է հակառակորդի վրա, իսկ գրոհից առաջ, սահմանված չափով, լրացնում փամփուշտների և ձեռքի նոնակների պաշարը:

Ջոկի դիրքին տանկերի մոտենալուն պես ջոկի հրամանատարի «Ջոկ պատրաստվիր գրոհի» հրամանով զինվորը պարտավոր է լիցքավորել զենքը, այն հանել պահպանակից, ձեռքի նոնակները նախապատրաստել գործողության, ամրացնել սվին դանակը:

Հենց որ տանկերն անցնեն ջոկի դիրքը, «Ջոկ, գրոհի-առաջ» հրամանով զինվորն արագ ցատկում է խրամուղուց և մյուս զինվորների հետ համատեղ վազքով կամ արագացված քայլով, այդ ուղղությամբ գրոհող տանկի ետևից շարժվում առաջ:

ՀՄՄ-ն (ԶՓ-ն) այդ ժամանակ կրակ է վարում հակառակորդի վրա, ապահովում ջոկի՝ ակնապայթուցիկ արգելափակոցների հաղթահարումը և գտնվում պատրաստ վիճակում՝ ջոկի ետևից շարժվելու դեպի ավելի նպաստավոր բնագիծ:

Գրոհի ընթացքում զինվորը դիտարկում է տեղանքը ջոկի գրոհի և թևերի ուղղությամբ, որպեսզի ժամանակին հայտնաբերի ու ոչնչացնի հակառակորդին, որը, բացի խրամուղներից և հաղորդակցման ուղիներից, կձգտի օգտագործել իրեն թաքցնող տեղանքի ցանկացած ծալքն ու տեղի առարկաները, որպեսզի կիրառելով նոնակներ և մերձմարտի այլ հակատանկային միջոցներ՝ ոչնչացնի կամ կանգնեցնի տանկերի առաջխաղացումը: Այդ պատճառով յուրաքանչյուր զինվոր պետք է արագ

արձագանքի հակառակորդի գործողություններին, անմիջապես կրակ բացի և ոչնչացնի հակառակորդի կրակային, առաջին հերթին՝ հակատանկային միջոցներն ու կենդանի ուժը:

Իր ուժերով գերազանցող հակառակորդի հակագրոհները ետ մղելիս զինվորները ջոկի հրամանատարի հրամանով դիրք են զբաղեցնում նշված բնագծում և տեղից կրակով ոչնչացնում հակագրոհող հակառակորդին, որից հետո շարունակում հարձակումը:

Հենց որ հակառակորդը սկսում է նահանջել, ստորաբաժանումներն անմիջապես անցնում են հետապնդման:

Հակառակորդին ետ շարտելու և նոր բնագծում պաշտպանություն զբաղեցնելու հնարավորություն չտալու համար հետապնդումը վարում են սրընթաց՝ օր ու գիշեր: Զինվորը, հետապնդելով հակառակորդին, հմտորեն օգտագործում է տեղանքի ծալքերն ու մյուս քողարկող միջոցները, դուրս է գալիս հակառակորդի նահանջի ճանապարհները, կաշկանդում նրա գործողությունները և ջոկի կազմով վճռական գրոհով պարտության մատնում նրան:

Որպես կանոն՝ զինվորը հետապնդում է հակառակորդին ջոկի կազմում, հետևակի մարտական մեքենայով (գրահափոխադրիչով):

ԶԻՆՎՈՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԶԻՆՎՈՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պաշտպանությունը մարտի տեսակ է : Նրա նպատակն է կասեցնել հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը՝ առավելագույն կորուստ պատճառելով նրան, պահել տեղանքի կարևոր շրջանները և պայմաններ ստեղծել՝ վճռական հարձակման անցնելու համար:

Պաշտպանության անցնելը կարող է իրականացվել իրադրության տարբեր պայմաններում: Մի շարք պայմաններում ստորաբաժանումը կարող է պաշտպանության անցնել և այն կազմակերպել հակառակորդի կրակի ներքո: Այլ դեպքերում երբ բացակայում է հակառակորդի հետ անմիջական շփումը, պաշտպանության անցնելն իարակացվում է նախօրոք: Ավելի դժվար է պաշտպանության անցնել հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում: Ադպիսի իրադրությունում զիվորը ստիպված է լինում, մարտի ընթացքում, ջոկի կազմով գրավել հարմար բնագիծ, և հակառակորդի կրակի ներքո, ինժեներական տեսակետից բարդ պայմաններում, դիրքերի սարքավորման աշխատանքներ:

Պաշտպանությունը պետք է լինի կայուն և ազնիվ: Կարողանա ետ մղել հակառակորդի հարվածները՝ օգտագործելով բոլոր տեսակի զենքերը:

Պաշտպանության կայունությունն ու ակտիվությունն ապահովում են պաշտպանվող զորքերի դիմացկունությամբ, բարձր բարոյական ոգով. Հմտորեն կազմակերպված պաշտպանությամբու կրակի համակարգով, պաշտպանություն մխրճված հակառակորդի արագ ոչնչացմամբ, վարակի տեղամասերում երկարատև մարտ վարելուն անձնակազմի նախապատրաստմամբ և ստորաբաժանումը վարելու հմտությամբ:

Պաշտպանությունը կձառայի նպատակին, եթե զինվորը հմտորեն սարքավորի, և քողարկի իր խրամատը, ցուցաբերի դիմացկունություն, տոկունություն և համառություն:

ինչպես նաև, հարձակվող հակառակորդին ոչնչացնելու համար, հմտորեն օգտագործի իր զենքը:

ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՐԱՄԱՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում պաշտպանության անցնելիս զինվորը, ստանալով խնդիրը, նախևառաջ պետք է տեղանքում գտնի բնական թաքստոցներ կամ ռումբի (արկի) ձագարաձուսեր, արագ թաքնվի հակառակորդի կրակից նախապատրաստվի մարտի: Գլխավորն, ինչքան հնարավոր է, արագ այնպիսի տեղ ընտրելն է, որտեղից հարմար է տեսնել հակառակորդին, խոցել նրան և մնալ աննկատ: Եթե մոտակայքում չկա ոչ մի թաքստոց, ապա անհրաժեշտ է խրամատավորել: Մինչև խրամատ փոելը պառկած դրությունից անհրաժեշտ է կարճատև ստուգել տեղանքը:

Պառկած դրությունից հրաձգության համար հակառակորդի կրակի ներքո, անհատական խրամատը փորում են հետևյալ կերպ՝ ընտրած տեղում զինվորը զենքը դնում է գետնին, իրենից աջ, բացված ձեռքի հեռավորությամբ, փողը դեպի հակառակորդի կողմը, շրջելով ձախ կողքի՝ դուրս է հանում հետևակի բահը՝ երկու ձեռքով բռնելով բահի կոթից, դեպի իր կողմն ուղղված հարվածներով կտրում է ճմափողը, դնում է մի կողմ, որպեսի խրամատը փորելուց հետո այն օգտագործի հողապատնեշը քողարկելու համար:


Սկզբում հողը նետում է առաջ, հետո աջ և ձախ կողմերը, որպեսզի իրեն ապահովի գնդակներից և արկերի կամ ականների բեկորներից խոցվելուց:

Խորությամբ խրամատի դիմացը մոտավորապես 20սմ փորելուց հետո պետք է փոքր ինչ ետ շարժվել և շարունակել փորել մնացած մասերը: Խրամատի լայնությունը պետք է լինի 60սմ, իսկ երկարությունը 170սմ: Աշխատանքն ավարտելուն պես անրաժեշտ է հողապատնեշն քողարկել: Ընդ որում պետք է ուշադրություն դարձնել հողապատնեշի բարձրությանը յուրաքանչյուր հողատեսակի համար այն տարբեր է լինում:


Եթե հակառակորդը ակտիվություն չի ցուցաբերում, ապա խրամատը փորելու աշխատանքները շարունակվում են:

Բարենպաստ պայմաններում, երբ հակառակորդը պասիվ է, ջոկի հրամանատարի հրամանով, կամ ինքնուրույն, անհատական խրամատները միացնում են մեկը մյուսին: ստանում ջոկի դիրք և այն բերում վերջնական տեսքի: Այդ նպատակով զինվորը


խրամատից դուրս չգալով, ձախ կողմից միացնող մուտք է փորում դեպի իր հարևանը:



Կանգնած դիրքից կրակելու խրամատ



ա



բ

Պառկած դիրքից կրակելու խրամատ

- ա) տեսքը կողմից,
- բ) տեսքը վերևից

Այդ դեպքում հողապատնեշի վրա, պատրաստում են սկոսիկ, և օգտագործում
ցցափայտ սահմանափակիչներ: Ցցափայտ–սահմանափակիչները խփում են
երկուական,ավտոմատի փողակալի և կոթի մոտ: Հնարավորության դեպքում
ցցափայտերը փոխարինում են երկեղջյուրներով;

Անկախ նրանից թե ինչ պայմաններում է զբաղեցվումպաշտպանությունը, միշտ
պետք է ցուցաբերել զգոնություն և պարտաստ լինել զենքի կիրառելուն, անընդհատ
դիտարկել տեղանքը, հատկապես գիշերը, և սահմանափակ տեսանելիության
պայմաններում, երբ առավել հնարավոր է հակառակորդի հանկարծակի հարձակումը:

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՏԻ ՎԱՐՈՒՄԸ

Պաշտպանությունում յուրաքանչյուր զինվոր, հմտորեն օգտագործելով իր զենքը, ամրաշինական կառույցները և տեղանքի նպաստավոր պայմանները, կարող է ոչնչացնել հակառակորդի ավելի մեծ թվով զինվորներ: Ինչպես նաև հաջողությամբ պայքարել հարձակվող տանկերի և այլ զրահատ մեքենաների դեմ:

Մինչև հակառակորդի գրոհի կրակային պատրաստության ու ընդհանուր հարձակման սկսելը, նրա առանձին խմբերը կփորձեն հետախուզություն վարել, սկանապայթուցիկ արգելափակոցներում բացել անցումներ կամ ներթափանցել պաշտպանության խորքը: Այդպիսի խմբերը ոչնչացվում են նշանակված հերթապահ կրակային միջոցներով, որոնց անձնակազմը պետք է լինի պահեստային կամ ժամանակավոր կրակային դրքերից անմիջապես կրակ բացելու մշտական պատրաստականության վիճակում: Մյուս զինվորները պետք է պատրաստ լինեն հակառակորդի գրոհը ետ մղելուն և միաժամանակ կատարելագործեն հրաձգության համար կրակային դիրքերի ինժեներական սարքավորումն ու անցկացնեն ՀՄՄ-ների (ԶՓ-ների) տեխնիկական սպասարկումը:

Հակառակորդի գրոհի կրակային պատրաստությունն սկսելուն պես զինվորը (եթե դիտորդ չէ) հրամանատարի հրամանով, թաքնվում է խրամախորշում կամ բլինդաժում՝ պատրաստ լինելու արագ զբաղեցնել կրակային դիրքը: Լինելով դիտորդ՝ զինվորը

գտնվում էիր տեղում և հետևում հակառակորդի գործողություններին: Դիտարկման արդյունքների մասին նա զեկուցում է հրամանատարին:

Հակառակորդի թունավոր նյութերի կիրառման դեպքում զինվորը արագ հագնում է հակագազը:

Հակառակորդի գոհի անցնելուն պես դիտորդի ազդանշանով կամ հրամանատարի հրամանով զինվորը զբաղեցնում է իր կրակային դիրքը և նախապատրաստվում մարտի: Գրոհող հետևակի վրա նա կրակ է բացում հրամանատարի հրամանով, երբ հետևակը դուրս է գալիս իրական կրակի հեռավորության վրա: Մինչ այդ՝ հակառակորդի վրա կրակ են վարում հրետանին, տանկերը, ՀՄՄ-ները, ՀՏԿՀ-ները և մյուս կրակային միջոցները:

Զինվորն այդ ժամանակ ուշադիր հետևում է հակառակորդի գործողություններին, ամեն ինչի մասին զեկուցում հրամանատարին և ընտրում նշանակետեր, որոնց նա պետք է ոչնչացնի ըստ հեռավորության: Հետագայում, հակառակորդի մոտենալուն զուգընթաց՝ կրակը վարում է ինքնուրույն:

Զինվորը պետք է հիշի, որ կրակը ավելի արդյունավետ է այն պահին, երբ հակառակորդը ստիպված է դանդաղեցնել ընթացքը առաջավոր եզրի առջև՝ արգելափակոցները հաղթահարելու ժամանակ: Յուրաքանչյուր զինվորի հիմնական խնդիրն է հակառակորդին հնարավորություն չտալ դիրքերին մոտենալ: Եթե այնուամենայնիվ հակառակորդը մոտենա, ապա զինվորը պետք է նրան ոչնչացնի դիմահար կրակով, նռնակներով և ձեռնամարտում:

Հակառակորդի տանկերով հետևակի գրոհը ետ մղելիս նռնականետորդը ոչնչացնում է տանկերն ու մյուս զրահապատ մեքենաները, իսկ գնդացրորդն ու ավտոմատավորները կտրում են հետևակը տանկերից:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՏԱՆԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԶՐԱՀԱՊԱՏ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

ՈՉՆՉԱՅՈՒՄԸ

Հակառակորդի տանկերը և այլ զրահապատ օբյեկտները մարտի դաշտում զինվորի համար ամենակարևորն ու առավել վտանգավորն են: Այդուհանդերձ տանկը զինվորի համար սարսափելի չէ, եթե զիննվորը գործում է խիզախ ու մտացված, լավ գիտի տանկի մարտավարատեխնիկական բնութագիրը, խոցելի տեղերը և կարողանում է հմտորեն օգտագործել զենք:

Հակառակորդի զրահապատ օբյեկտները ոչնչացնելու ձևերի ու միջոցների ընտրությունը պայմանավորված է կոնկրետ իրադրությունից: Տանկերը և մյուս զրահապատ նշանակետերը ոչնչացնելու համար մարտում օգտագործվում են՝ ՀՏԿՀ-ներ, նոնականետեր, հակատանկային նոնակներ, հակատանկային ականներ, ինչպես նաև կրակ՝ դիտասարքերի վրա, հրաձգային զենքով: Եթե տանկը մոտենում է դիրքին (խրամատին) և չի հաջողվել այն ոչնչացնել, ապա պետք է սպասել, քանի դեռ տանկը չի մոտեցել 25-30մ հեռավորության վրա: Այդ տարածության վրա տանկը իր կրակով արդեն վտանգավոր չէ, քանի որ նույնիսկ հրանոթի և գնդացրի ամենամեծ իջեցման դեպքում նրանց կրակը չի կարող խոցել զինվորին: Այդ պահը պետք է օգտագործել հակատանկային նոնակը նետելու համար: Չի բացառվում, որ նետած հակատանկային նոնակը չխոցի տանկին, այդ դեպքում պետք է խրամուղու մեջ ցատկել մի կողմ կամ պառկել խրամուղու հատակին, իսկ երբ տանկն անցնի, արագ ոտքի կանգնել և նոնակը նետել տանկի կողեզրին կամ իրանին: Պայթյունից հետո անհրաժեշտ է նախապատրաստվել հրաձգության՝ խոցված տանկը լքող անձնակազմը ոչնչացնելու համար:

Հակառակորդի հարձակվող տանկերի ՀՄՄ-ների (ԶՓ-ների) վրա նոնակ նետելիս նշանառման կետը ճիշտ ընտրելը մեծ նշանակություն ունի, քանի որ հակատանկային նոնակները վասում են միայն զրահապատ նշանակետին դիպչելիս: Դեպի զինվորի կողմ շարժվող կամ նրա մոտից հետացող տանկի վրա նոնակը պետք է նետել դիմհանդիման շարժվելիս կամ հեռանալիս, ինչպես անշարժ հորիզոնական նշանակետերի վրա, ընդ որում, պետք է նկատի առնել, որ նոնակի թռիչքի ընթացքում մեքենան հասցնում է անցնել 5-10մ:

Տանկերի և մյուս շարժական գրահապատ օբյեկտների դեմ պայքարը կարելի է մղել՝ օգտագործելով հակատանկային ականներ: Հակատանկային ականները տեղանքում տեղակայում են ականային արգելափակիչների օգնությամբ, իսկ զինվորն այն տեղադրում է ձեռքով:



Զինվորի գործողությունները խրամուղում

Հակառակորդի գրահապատ մեքենաների դեմ պայքարը կարող են վարել նաև գնդացրորդներն ու դիպուկահարները, կրակ բացելով դրանց դիտասարքերի վրա:

Առանձին դեպքերում ջոկի հրամանատարի հրամանով հակառակորդի տանկերի դեմ պայքարելու համար նշանակվում է զինվոր, որը, օգտագործելով տեղանքի ռելիեֆը, ջոկի կրակով կամ ծխով պատսպարվելով, կարող է հակատանկային նոնակներով մոտենալ նշանակետին և ոչնչացնել այն:

ԴԻՐՔԵՐ ՆԵՐԽՈՒԺԱԾ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ

ՈՉՆՉԱՅՈՒՄԸ

Եթե պաշտպանության առաջավոր եզր ներխուժած հակառակորդի առաջին խմբերը մտնեն խրամուղի, ապա այդ խմբերի հետագա ծավալումը հնարավորություն չտալու համար զինվորն արագ տեղադրում է նախօրոք պատրաստված ոզնիներն ու երկեղջուրները: Տեղադրելով արգելափակոցները՝ նա մարտ է մղում մխրճված հակառակորդի դեմ և միաժամանակ հետևում խրամուղուն: Հակառակորդին, որը պատրաստվում է տեղաշարժվել խրամուղով կամ խրամուղուց դեն նետել արգելափակոցները, (պայթեցնել), զինվորը ոչնչացնում է դիմահար կրակով, նոնակով կամ ձեռնամարտի բռնվելով:

Մարտը պետք է վարել մինչև հակառակորդի լրիվ ոչնչացումը և չի կարելի առանց հրամանատարի հրամանի լքել դիրքերը: Ոչ՝ ջոկի թևերում հայտվելը, ոչ՝ էլ շրջապատումը չպետք է զինվորին ստիպեն ետ քաշվել զբաղեցրած բնագծից: Զինվորը պետք է հիշի, որ նույնիսկ լրիվ շրջափակման պայմաններում ջոկի կազմում համառ մարտ մղելով՝ շեղում է հակառակորդի զգալի ուժերի ուշադրությունը և դրանով իսկ մեծ օգնություն ցուցաբերում պաշտպանությունն ներխուժած հակառակորդի լրիվ ոչնչացմանը:

Եթե հակառակորդին հաջողվում է ներխուժել հարևան ջոկի դիրքերը, ապա զինվորը հրամանատարի հրամանով հաղորդակցման ուղիում կամ խրամուղում

զբաղեցնում է պահեստային խրամատը և դիպուկ կրակով, իսկ մոտ տարածություններում՝ ձեռքի նռնակներով ու սվին-դանակով ոչնչացնում է հակառակորդին: Գրոհը ետ մղելուց հետո անհրաժեշտ է անհապաղ կարգի բերել զենքը, լրացնել զինամթերքը և նախապատրաստվել հակառակորդի կրկնվող գրոհը ետ մղելուն:

Մեկ ուրիշ դիրք նահանջելը կատարվում է միայն հրամանատարի հրամանով, հրետանու և ականանետների պատսպարող կրակի ներքո: Նահանջը կատարվում է հակառակորդի համար հանկարծակի՝ ծխի, մառախուղի և սահմանափակ տեսանելության այլ պայմաններում:

Եթե զինվորը հրաման է ստացել մյուս զինվորների հետ ապահովել նահանջը, ապա նա պետք է համառորեն պահի զբաղեցրած դիրքը, հնարավորություն չտա հակառակորդի ճեղքումը: Նահանջողների նշված բնագիծ հասնելուն պես զինվորը հրամանատարի ազդանշանով սկսում է ետ քաշվել:

Նահանջը կատարվում է վազելվազքով: Կատարելով առաջին վազելվազքը՝ զինվորը կրակով ապահովում է իր ընկերների նահանջը: Եթե նույնիսկ հակառակորդը հետապնդում է, զինվորը կրակով կասեցնում է նրա առաջխաղացումը և ինքն էլ նահանջում ջոկի կրակի ներքովվազելվազքով:

Նահանջելիս պետք է կարողանալ արագ և աննկատ, հարևանների հետ փոխգործակցելով պոկվել հակառակորդից, ծածուկ զբաղեցնել նոր բնագիծ, նախապատրաստվել մարտին, և ետ մղել հակառակորդի հարձակումը՝ նրան կորուստներ պատճառելով:

Եթե առաջավոր եզրով մեր դիրքը ներ խուժած հակառակորդը խորքի ստորաբաժանումներից ենթարկվում է հակազրոհի և սկսում նահանջել, զինվորը, այդ պահին գտնվելով իր դիրքում, հակազրոհներին օգնություն է ցուցաբերում իր կրակով ոչնչացնում նահանջող հակառակորդին:

Ջոկի դիրքին հակազրոհողների մոտենալուն պես, զինվորը, հրամանատարի հրամանով, անցնում է հակազրոհի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Անցնելով «Զինվորը մարտում» թեման հանգում ենք այն եզրակացության, որ մարտի ժամանակ իրադրությունը արագ կարող է փոխվել: Այսպես, օրինակ հարձակման ժամանակ հանդիպելով համառ դիմադրության, զինվորը հարկադրված պետք է նահանջի և անցնի պաշտպանության: Եվ հակառակը, պաշտպանության ժամանակ հաջողությամբ ետ մղելով հակառակորդի հարձակումը, զինվորը իրադրությունից ելնելով, անցնում է հարձակման, թույլ չտալով նահանջող հակառակորդին վերախմբավորվել, ամրանալ պաշտպանական դիրքերում:
2. Գիտենալ համագորային մարտի հիմունքներն ու մարտի բոլոր տեսակներում (հարձակում, պաշտպանություն, հանդիպակաց մարտ, դիրքային պատերազմ) ստորաբաժանումների գործողություններին վերաբերող պահանջները:
3. Կարողանալ հասնել լիակատար պատրաստականության, հմտորոն գործել իր մարտական դերին համապատասխան, մարտը վարել բարդ ու կտրուկ փոփոխվող իրադրությամբ, տարբեր տեղանքում օր ու գիշեր՝ այլ գորատեսակների ստորաբաժանումների հետ գործակցելով, ինչպես մարտական տեխնիկայով, այնպես էլ հետիոտն կարգով:
4. Աշակերտը, անցնելով վերոհիշյալ թեման, գալիս է այն համոզման, որ զիվորը պետք է օժտված լինի բարոյա-հոգեբանական, ֆիզիկական, մարտական բարձր որակներով, գիտակցված զինվորական բարձր կարգապահությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Մարտում զինվորի գործողությունների վարժաձևերն ու եղանակները» ՀՀ ՊՆ, ՀՀ ՋՈՒ Մարտական պատրաստականության վարչություն. Երևան 2004թ.
2. «Դասակի հրամանատարի հուշատետր», ՀՀ ՊՆ, Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, Երևան 2003թ.
3. «Զինձառայողների համակողմանի դաստիարակության հիմնահարցերը». ՀՀ ՊՆ հրատարակչություն, Երևան 1996թ.
4. Ռազմագիտություն դասագիրք IX-X դասարանների համար, Երևան 1997թ.